

## ՆԵՐՓԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մի տարուայ յեղափոխաբան դասիարակութիւն.—Արեան բալանիք.—Հասարակական կարծիքի ուսում.—Խուռ բիւթրատների ամօրիածութիւնը.—Ս.-դեմ. բնի միջոցներով վաղ կորզելու մասին.—Քիսակից մասսայի դերը.—Էջմիածնի կենտրոնական ժաղովի բնարուաւը մի բանի խօսերավ.—Թարմութիւն թէ խալութիւն:

Մի ամիս է մնում սր կաաարուի Հոկտեմբերի 17-ի տարեդարձը, բայց յեղափոխական հուժկու ալեկոծութիւնը լայնածաւալ Ռուսաստանում գեռ ևս չի խաղաղուել: Մի տարուայ յեղափոխական կեանքը ահագին փոփոխութիւններ է մոցրել ժողովրդական կեանքի բոլոր խորչերում, խորացնելով դասակարգերի գիֆերենցիացիան և գիտակցութիւնը, պայծառացնելով մասսաների քաղաքական-հասարակական ըմբռնողութիւնը: Եւ մի տարուայ յեղափոխական կեանքը աւելի մեծ ծառայութիւն ցոյց տուեց ժողովրդի հասունութեան գործին, քան տասնհակ տարիների սովորական կերպով ընթացող առաջխաղցումը:

Յեղափոխական տարին իր ազդեցութիւնը թողել է նոյն իսկ ամենարէակցիօն տարրերի հասկացողութիւնների վրայ. եթէ համեմատէք դրանց հայեացքները այժմ և մի տարի առաջ —կը տեսնէք ակամայ, անդիտակցական զիջում դէպի ձախ. նոյն իսկ հոչակաւոր Տրէպովը մահից մի քանի ամիս առաջ դառել էր «սահմանադրական» և կամարիլիային հակառակ անդում էր թէ Պետական Դուման չարձակելու և թէ ընդդիմադիր սեծամասնութեան միջից մինխստութիւն կազմելու մասին: Կովկասի պօլիցիայի գլխաւոր Շիրինկինն էլ հրաժարուելուց առաջ «սահմանադրական» խրատներ էր կարդացել փոխարքայի գլխին: «Իսկական ոռւս մարդկանց դաշնակցութիւնը» պատրաստում է «սահմանադրական եղանակով» հասարական կարծիքը իր կողմ դրաւել, «ագիտացիա և օրգանիզացիա» է լսում այնտեղ, ուր առաջ «ամպուտացիա և պրովոկացիա» էր անւումնոյն հասարակական կարծիքի դէմ:

Բիւրօկրատիւնն անգամ ուզում է «լիրերալ» և «սահմանադրական» երեալ. մի շարք «ըեփորմներ» է մտցնում գիւղացիների ազատ հողեր ծախելու և նրանց դառակարգային սրդմութիւնները վերացնելու մասին, իսկ զինուորական—դաշտային դատարաններ մտցնելը, խօսքի և միութիւնների ճնշումները ի հարկէ բացատրում է նրանով որ նախ խաղաղութիւն պիտի վերականգնեն, որ ապա հնարաւոր լինի լուրջ ըեփորմներ մտցնել... Դուրս է գալիս որ այդ «խաղաղութիւնը» կը վաճանդնուէր եթէ թոյլ արուէլ սահմանադրական-ժողովրդավարական կուսակցութեան (կ. դ.) համագումարը և օրինականացումը: Այդպիսի արգելք դնելով Պետական Դումայի կենարօնի առաջ, միւս կողմից բիւրօկրատիւնն աջակցում է և խրախուսում աջակողմեան կուսակցութիւններին և ինքն էլ մեծ պատրաստութիւն է տեսնում ապագայ ընտրութիւնների ժամանակ բիւրօկրատիւնական թևկանածուների ընտրութիւնը աջողցնելու: Հասարակական կարծիքի վրայ ազելու նպատակով պիտի գաւառներում հիմքուեն կիսապաշտօնական (օֆֆիցիոզ) օրգաններ, մի մի փոքրիկ «Россия» թերթեր: Այդպիսով կառավարութեան ճնշումը առաջիկայ ընտրութիւնների ժամանակ ձգտելու է կեղծել ժողովրդի ազատ կամքը: Անշոշտ, ժողովրդական ձայնը կեղծող բիւրօկրատ այդ շանտաժիւտները չեն դատարելու ամեն տեղ բղասուել թէ իրանք են ժողովրդի, աշխատաւոր դասակարգի իսկական ներկայացուցիչները, գտնուելու են խուժան, իմաստակ պոռոտախօնների, շահազրգուած չինովնիկների և հասարակական ցեցերի լեգիօններ, որոնք ընդունելու են ժողովրդական կամքի այդ կեղծիքը: Փոքրիկ չափով բիւրօկրատիւնական այդ օրինակ կեղծիք մենք տեսանք մեր հայկական կեանքում ևս... Իր այդ «լիրերալ» և «սահմանադրական» գործունէութեան հետ միաժամանակ բիւրօկրատիւն շարունակում է բազմացնել արեան բաղանիքների վայրերը, ուր հրէաներին խելքի են բերում հակայեղափոխական տարրերը: Բէլօստոկին, Գոմելին, Քիշինևին, Օդեսային յաջորդեց օգոստոսի 26-ին Սէգլէցի ջարդը. թնդանօթային սպակուծութիւններով և հրացանների համազարկերով ջարդում էր անզէն խաղաղ ընակիչների ապստամբութիւնը, իսկ խուլիգանները միաժամանակ մաքրազարդում էին հրէական տները և խոնութիւնները աւելորդ ապրանքներից և կանկարասիքներից: Մի յեղափոխական պատժելու համար սպանում էին հարիւրաւոր անմեղ և խաղաղ ընակիչներ: Այդ է սպիտակ տերրորի լոգիկան:

Այդ լոգիկայով է առաջնորդուել բիւրօկրատիւն և Կովկասում. այեղափոխականներին պատժելու համար ամբողջ գիւ-

դեր և քաղաքներ մատնելով կատաղած խուժանի եղբայրասպան վայրագ ընազդների վակխանալիային: Թող իրար կոտորեն, թող արինոշտութեան, ազգային անմիտ քիչնախնդրութեան պսիխոզը վարակելով մասսաները աւեր և սրածութիւն սփոփ ամրող երկրում, թող այս դժոխաքի մէջ տապակուի խաղաղ մասսան—միայն թէ հազարաւոր անսեղ մարդկանց մէջ ոչնչանան մի քանի «յեղափոխական» համարուած անհատներ և խմբակներ: Ահա անարխիան պահպանելու դիւային միտքը:

«Մեղնից յետոյ թէկուզ ջրհեղեղ»—այս է բիւրօկրատիայի բարոյական սկզբունքը: Եր գերիշխող դիրքը, իր կաստային շահերը պաշտպանելու համար նա պատրաստ է ամեն ինչ կործանել, ոտնատակ անել: Ոչ որ իբրև թէ չի գիտակցում երկիրը ներկայ դրութիւնից հանելու միջոցները, ոչ ոք չգիտէ այդ ճանապարհը և բիւրօկրատիան պէտք է զոռով, բռնի միջոցներով ստիպի որ ժողովուրդը գնայ այն ճանապարհով որ հաճելի է այդ ինքնակոչ, ինքնընտիր ներկայացուցիչներին: Տնաբոյս բիւրօկրատները կ'ասէին: այդ լինում է «զափտելու իրաւունքով», ու զախատնому որայ! պըծաւ գնաց: ոյժը՝ իրաւունք է, և ասեն մի ուզուրպատօր իրաւացի է անելու, ինչ որ կարող է, ինչ որ իրազործելու Փիզիկական ոյժ ունի...

Դրական ոյժերի յարաբերութիւնն այդպէս է! վազը կը փոխուի այդ յարաբերութիւնը և հրամաններ, օրէնքներ թելադրողը կը լինի ոչ բիւրօկրատիան, այլ զիտակից մասսան, որ սակայն խաղալիք չի դառնալ դեմագոգների և բիւրօկրատների ձեռքում և երբէք չի դաւաճանիլ ազատութեան սկզբունքներին: Խոր ակօսէք զիտակցութիւնը մասսաների մէջ որ պակասեն խուժանի շարքերը! Հաւեկարար, բէալ ոյժերը գիտակից մասսայի կողմը զրաւելու համար պէտք է շարունակել նրա մէջ զիտակցութիւն զարթեցնող ազիտացիան և դիմազրաւելու կարողութիւն ստեղծող օրգանիզացիան (կազմակերպումը): Երկու գործողութիւնների լրջութիւնը պահանջում է ժամանակ և անդուլ աշխատանք: Ինչպէս ծառի բռնի մէջ անթիւ բջիջներ աննկատելի աճելով վերջի վերջոյ ճաքեցնում են իրանց կաշկանդող կեղելը և շարունակում իրանց աճումը և ոյժերի ամբարումը, որպէսզի նորից լայնացնեն այդ ճեղքուածը, նոյնը և յեղափոխական կեանքում: Խռովարացական բռնկումները, յեղափոխական ֆէյբերվերկները, ճռճռան ֆրազները և տարտարենական յոխորտանքները անզօր են փոփոխութիւն առաջ բերել բէալ ոյժերի յարաբերութիւնների մէջ: Ժողովրդական բջիջների մէջ պէտք է շարունակել անդուլ աշ-

խատանք գիտակցութիւն և կազմակերպութիւն ստեղծելու նը-  
պատակով: Իսկ թէ մնը Կովկասում դեռ որ աստիճան յետ է մը-  
նացել դասակար գայինդիտակցութեան զարգացումը և ի՞նչ խառ-  
նափնջորութիւն է տիրում մի «մեծ» քաղաքական գկուսակցու-  
թեան» կազմակերպման և «կառավարութիւն» խաղալու տենչերի  
մէջ—այդ պէտք է որ յայտնի լինի բոլորիս: Կենտրոնական ժո-  
ղովի պատգամաւորական ընտրութիւնները ցոյց տուին թէ ինչ  
բան է շաղային կառավարութիւնը մեզանում: Ռուս բիւրօկրա-  
տիան անգամ այդ տեսակ հարցում ամօթլածութիւն է պահպա-  
նում: Պետք է բուազիկան չեռագրական գործակալութիւնը շտապեց  
պաշտօնական հերքում տպել թէ «իբր ներքին գործոց մինիստ-  
րութեան մէջ հուանդուն աշխատանքներ են կատարում այն նը-  
պատակով որ առաջիկայ ընտրութիւնների ժամանակ Պետա-  
կան Դուման անցկացնեն կառավարութեան հաճելի մարդկանց»:  
Այդ հերքումը չի գոհացնում «Բնու.»ին և նա իր կողմից  
նկատում է հետևեալը. «Եթէ մինիստրութիւնը բացարձակ կեր-  
պով հրաժարուէր պաշտօնական թեկնածութիւնից, եթէ  
նա ուղարկէր գաւառական վարչապետաներին հրահանգներ,  
որոնց մէջ հուանդուն կերպով պնդէր ընտրութիւնների ազատու-  
թեան վրայ և խիստ պատասախանատութիւն սպահնար պաշ-  
տօնական անձանց կողմից ընտրողների վրայ ճնշումներ գործելու  
փորձերի համար,—եթէ այդ յայտարարուած լինէր պարզ և  
հրապարակաւ, իհարկէ աւելորդ կլինէր որ և է հերքում... բո-  
լորին յայտնի է թէ նապոլէօն III-ի ժամանակ ինչ ճնշումների  
տակ էին կատարուում ընտրութիւնները»:

Մակայն միջոցների անխտրականութիւնը փոխում է մարդ-  
կանց մաշտարը ազնւութեան և բարոյականութեան մասին և  
դժուար է լինում այնուհետեւ որևէ բան համոզիլ. միշտ ճար-  
ւում է սովիստութիւն արդարացնելու համար թոյլտրուած զեղ-  
ծումը: Մաքուր յեղափոխական կազմակերպութիւնները ի հար-  
կէ երբէք չեն կարող այս կամ այն պատճառարանութեամբ  
ընդունել ժողովուրդը անբարոյականացնող միջոցները: Յայտ-  
նի է թէ, օրինակ, ըստի միջոցով փող կորզել թէ մասնաւոր անձից  
և թէ արքունական հաստատութիւններից որքան ի չար են գործ  
դրել զանազան խուլիքանական, շանտաժիստ և յանցաւոր կազ-  
մակերպութիւններ ձևագիր կամ օրական կոմմունիստ—անար-  
խիստներ... Սոցիալ-Դեմոկրատիան երբէք այդ միջոցները չի ար-  
դարացրել և վերջի ժամանակներում կայացած «Հ-ըդ հիւսիսային  
շրջանային կոնֆերենսցիայում ա.դ.բացորոշ յայտնեց որ նաանթոյ-  
լատրելի է համարում կուսակցութեան անդամների համար մաս-  
նակցել զուով զրամական միջոցներ կորզելու գործունէութիւնն-

րին և օգտուել այդպիսի գումարներից։ Մաքուր, գաղափարական յեղափոխականը այլ կերպ չեր կարող վարուել, բայց մեզանում....

Նշանակած ժամանակին էջմիածնում կայացաւ Կենտրոնական ժողովը, որ գաշնակցականները Սահմանադիր անունն էին տալիս։ Ընտրական ամեն տեսակ զեղծումներով և ձնշումներով ժողովրդի կամքը կեղծելով այդ «կուսակցութիւնը» էջմիածին տարաւ իր բոլոր մտաւոր-բարոյական ոյժերը և ցոյց տուեց թէ Բնչ կերպ է նա առասարակ վճռում հասարակական-քաղաքական հարցերը։ Էջմիածնի հիւանդանոցում ազգային պարլամենտ խաղալու գաւեշտական փորձեր եղան. լսուեցան տեղի, ժամանակի, հանգամանքի և ըննուղ առարկաների հետ կապ չունեցող յեղափոխական պուտախօսութիւն, ձախամոլական իմաստակութիւններ, ոճնկիխօտական հարայ հրցներ և տարտարէնական յոխորտանքեր—այդ բոլորը կարդաց հայ ժողովուրդը և հիասթափուած ասաց ինքն իրան. «Եւ այդ մարդիկ յանդքնութիւն են ունեցել զոռով իրանց ամբողջ ազգի տէր ու տնօրէն յայտարարելով ամեն տեսակ էքսպերեմենտներ կատարել նրա գլխին»։ Միշտ «ամենածայրայել յեղափոխական» երևալու տենչով բռնուած այդ պարոնները մոռացան որ գնում են պալմիատիւններ, ժամանակաւոր բարեփոխութիւններ մշակելու և ոչ իսկական յեղափոխական ակտեր կատարելու էջմիածնում։ Եւ երր սպառուեցան ճոռոմաբանների նիւթերը և յոգնեցին ճղաւելուց և բղաւելուց—տեսան որ իրական աշխատանք կայացնելու միանգամայն անպատրաստ են և անկարող։ Ռուս բիւրօլլրատիան իր անտեղի միջամտութիւնով վերջ դրեց կոմեդիային—որի վերջին արարողութիւնը այդպիսով չտեսան հաղիսականները։ Պոլիցիայի երեսումը բաւական սթափեցրել է տաքացած «յեղափոխականների» արիւնը և նրանք համեստօրէն ստորագրութիւն են տուել և հեռացել՝ «Էլ չանելու» խոստումով, ինչպէս վայել է սովորական օնակատել-ներին։ Իսկ Կենտրոնական ժողովովի առջև դրուած համեստ հարցերը. դպրոցական, կալուածական և վարչական մնացել են նոյն դրութեան մէջ և նոյնիսկ աւելի իրճընուել, որովհետեւ էջմիածնի կամարիլիան տեսաւ որ վայելում է առանձին համակրութիւն ազգային բիւրօկրատների կողմից։ Կամարիլիան և բիւրօլլրատիան ամենասերտ բրոկ են կազմել։ Եւ կաթողիկոսը իրան զգում է աւելի մեծ չափերով միահեծան, քան առաջ. մեր բիւրօլլրատները զիտեն որ այդ մեահեծանութիւնը միջոց է տալիս զանազան հաջաթների և վեհարանի կամարիլիայի աղդեցութիւններով գլուխ բերել իրենց ցանկա-

ցածները։ Այդ կողմից մեր ազգային բիւրօկրատները յիշեցնում են գերմանական իւնկերներին, որոնք սիրում են ասել. «Կայսրը արսօլիւտ է, երբ նա մեր կամքն է կատարում»...

Երկու ամիս շարունակ կագ ու կոփի, տուր ու դմխոց, ընտրողական պայքար զուլուսական միջոցներով, ճռճռան ֆրազներ, սպառնալիքներ, ռազմական կոչեր, բուտաֆորական նիզակների և սրերի թափահարում և հետևանքը ...ոչինչ։ Անշուշտ գրանց Պանգլոս փիլիսոփաները դարձեալ պատճառների և հետևանքների մասին երկար ու բարակ դատողութիւններ կը գրեն և կ'ապացուցեն որ ամենայն ինչ կատարեալ է դաշնակցութեան կառավարութեան ներքոյ և հայ ազգը բախտաւոր է որ նրա վիճակը գտննում է այդպիսի հանճարեղ քաղաքագէտների ձեռքերում...

Անշուշտ, «աղերանցից» շատերը տոգորուած են՝ բարի ցանկութիւններով և գործելու եռանդով. սակայն ցանկութիւնը և եռանդը առանց առողջամտութեան, առանց գիտութեան, առանց լուրջ մշակուած ուղղութեան և գործելակերպի ընդունակ են անել այն, ինչ որ եղաւ Թիւրքիայի, Պարսկաստանի և այժմ էլ Կովկասի հայերի կեանքում. քայլայում, աւեր, կործանում ժողովրդի, սումբուր, քաօս և Խերարաշ ազգային կոչուած բոլոր գործերում։ Մեր «աղերքը» խակութիւնը չեն ջոկում թարմութիւնից։ Խակ պտուղներից չափազանց տարբեր են հաշուն և թարմ պտուղները։ Խակ մտքի պտուղներից հասարակական փորլուծութիւն, դեղինտերիա և մահ է առաջ գալիս միայն և՛ ոչ թէ առաջադիմութիւն...

15 սեպտ.

Հ. U.